ՁԻՈՒ ԱՂԲԸ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԷՋ

Ցաճախ ուշադրութիւն է գրաւել Լօնդոնի եւ ուրիշ մեծ քաղաքների երթեւեկող փողոցների ձիու արտաթորութեան կոյտերով ծածկուած զզուելի գրութիւնը։ Թաց եղանակներին փողոցները մածուցիկ են դառնում աղբի շաղախով, իսկ չոր եղանակներին օդը լի է փոշիացած արտաթորութեանց բուրմունքներով։ Ի հարկէ փողոցները մաքրւում են՝ յաճախ կամ նուազ համեմատութեամբ, նայած առողջապահական յանձնախմբի գործունէութեան եռանդին. բայց այդ միջոցով անհնարաւոր է արմատապէս փողոցները ազատել ձիու աղբի ճնշակար աղդեցութիւնից։ Միակ հիմնական միջոցը մինչեւ այժմ համարուած էր ձիու վերացումը, փոխանակելով այդ՝ ինքնաշարժ գնացքով (Motor)։ Հարց է ծագում չի՞ կարելի արդեօք մի այլ միջոց գտնել մինչեւ այդ բարեփոխման իրագործումը։ Եւ ահա Սկարբրօրօքնակ (Անգղիա) Դոկտ. Քալանթարեանը ուղարկել է մեզ իր արած գիւտի մանրամասն նկարագրութիւնը։ Նա գործն անուանում է մեքենայական թակարդ կտորների ձիանց աղբի համար։ Դա բաղկացած է մի պատշաճաւոր արկղից կամ աղբի թակարդից, ամրացրած կողքի որ եւ է յարմարաւոր տեղին, ինչպէս օրինակի համար, աղջեւի անիւների առանցքին, եւ կակուղ անջրանցիկ կտորից շինուած մի թեք խողովակից կամ հաւաքչից, որ մի ծայրով միացրած է ձիու յետակողմերին՝ եւ միւս ծայրով ագուցուած մի վեր ցցուող խողովակին, որը սկսում է արկղից եւ ուղղուած է դէպ ձիու յետեւը։ Աղբի արկղի մէջ կայ բաց երեսով մի ներքարկղիկ, որը կարելի է դուրս հանել եւ կրկին տեղաւորել առանձին կոթով որ արկղի յետեւի կողմումն է։ Թեք խողովակը կամ հաւաքիչը նման է մի բաց խողովակի եւ ձիու յետեւի կողմից այնքան է լայնանում եւ տարածւում, որքան հարկաւոր լինի ձիու արտաթորութիւնները հաւաքելու համար։ Բայց ներքեւ գնալով աւելի նեղանում է մինչեւ վեր ցցուող խողովակի տրամագիծը։ Վեր ցցուող խողովակը պտուտակով ամրացրած է արկղի վերեւը, այն կերպով որ թեք խողովակը կամ հաւաքիչը միշտ կարող է ուղղուել՝ կազմելով մի ուղղահայեաց գիծ յետնակապերի վերաբերմամբ, ձիանները ինչ բարձրութիւն էլ ունենան։ Դոկտ. Քալանթարեանը ապացուցանում է, որ կենդանին թէ կանգնած է թէ շարժուն դրութեան մէջ, նրա արտաթորութիւնները (եւ նրա մէզը, երբ ձին մատակ է) թեք խողովակը կամ հաւաքիչը ընդունում է եւ ձգում շարժական ներքարկղիկին մէջ, որը կարելի է պարբերաբար դատարկել կամ մաքրել։ Ինչ վերաբերում է արու ձիու մէզին, եթէ ցանկացուի, մի ձագատաձեւ ընդունիչ կարելի է յարմարեցնել, որ տեղափոխէ մէզը մի սնտիկ

digitised by A.R.A.R.@

խողովակով ներքարկղիկի մէջ կամ մի առանձին ընդունարան։ Արկղի վեր ցցուող խողովակի վրայ կայ մի փական, որ թոյլ է տալիս ազատ կերպով արտաթորութիւնները եւ մէկը ներս մտնելու, բայց արգելում է հոտը դուրս գալուն։ Թեք խողովակը կամ հաւաքիչը եւ արկղը մշտապէս փակուած են միմեանց հետ եւ ամրացրած կտաքին։ Երբ ձին լծում են, թեք խողովակը կամ հաւաքիչը ամրացուում է յետակապերի հետ գոտիների, կապերի կամ կարթի միջոցով։ Բացի արկղից ամէն ինչ կակուղ է եւ դիւրաթեք։ Եւ որովհետեւ ամբողջ զործիքի որ եւ է մասը չի դիպչում ձիան մարմնին, ուստի Դոկտ. Քալանթարեանը ոչ մի առիթ չի նկատում մինչեւ անգամ ամենախրաչող կենդանուն վախեցնելու։ Միակ առարկութիւնը որ կարող է լինել, դա այդ գործիքի անսովոր եւ նորաձեւ երեւոյթն է։ Բայց այդ այնքան էլ անհիւրընկալ եւ տգեղ չէ եւ նկատելով դրա մեծ օգտակարութիւնը, հասարակութիւնը, կարճ միջոցում կ'սովորի զորան, որպէս արդէն վարուել է կտաքի ցեխակալ թեւերին կամ նրան վերաբերող ուրիշ մասերին։ Նա համոզուած է, որ եթէ այս գործիքը հանրօրէն ամէն տեղ ընդունելութիւն գտնի, այն ժամանակ քաղաքների փողոցները գրեթէ այնքան մաքուր եւ առողջարար կ'լինեն, որպէս պարտէզների զբօսատեղիները։ Խխտերը եւ մահացութիւնը կ'նուազին։ Քաղաքների բարեկեցութիւնը զգալի կերպով կաւելանայ։ Նա չէ չօշափում խնդրի խնայողական կողմը, որովհետեւ դա ինքնըստինքեան բայայայտ կ'լինի քաղաքացիական մասի կառավարութեանց, այն մեծ ծախքերի պատճառով, որ արւում են միայն ձիու արտաթորութիւնները մաքրելու համար։ (1)

«Բրիտանական Բժշկական Հանդէս»

Յունվ. 2, 1904

---

(1) Լոնդոնէն մեզ կը գրեն, թէ պ. բժ. Յ. Ա. Քալանթարեանց Լոնդոնի Քաղաքային Վարչութեան դիմած է, այնտեղ գործադրել տալու համար իր գիւտը։

Տես. «Բանասէր»ի

digitised by A.R.A.R.@